Յան Էլիասոն.

ՀՆԱՐԱՎՈՐ ԵՆ ԱՎԵԼԻ ԾԱՎԱԼՈՒՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեփանակերտ-Երեւան. 26 օգոստոսի - Օգոստոսի 25-ին Ստեփանակերտում ավարտվեցին ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանի, ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանի, արտգործնախարարի պաշտոնակատար Արկադի Ղուկասյանի բանակցությունները ԵԱՀԽ Մինսկի խմբի նախագահ Յան Էլիասոնի հետ: Ինչպես հայտնել է Ա.Ղուկասյանը ԼՂՀ ՄԼՊ ներկայացուցչին, ԼՂՀ ղեկավարությունը ներկայացրել է հակամարտության կարգավորման ուղղությամբ իր ունեցած պատկերացումները, քննարկվել են կրակը չվերսկսելուն ուղղված հետագա քայլերը: Արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի կարծիքով դա բարենպաստ միջավայր կստեղծի քաղաքական որոշումներ կայացնելու համար: Հանդիպման մասնակիցները պայմանավորվածություն են ձեռք բերել խորհրդատվությունները շարունակելու վերաբերյալ, որոնք ամենայն հավանականությամբ կընթանան Երեւանում Էլիասոնի Բաքու կատարելիք այցից հետո:

– Եթե փոխհամաձայնության գանք, ապա մոտ ժամանակներս հնարավոր կլինի ավելի ծավալուն բանակցությունների անցկացումը հակամարտող կողմերին հուզող բոլոր հարցերի շուրջ,– ասել է նա:

«ՓԱՍՏ»